

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցի տարրական դասարաններում դասավանդող ուսուցչի /դասվարի/ թափուր պաշտոնի համար:

Դասվարի պաշտոնի համար վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և բանավոր (մանկավարժական, մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունումը նոյեմբերի 7-ից դեկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-15:00, բացի շաբաթ և կիրակի օրերի:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 13-ին ժամը 14:00-ին, Իջևանի թիվ 4 հիմն.

դպրոցում: Հասցեն՝ Իջևան, Նալբանդյան 1:

Տեղեկությունների համար գանգահարել 3-62-67, 094005454 հեռախոսահամարներով:



Ստեփան Բ. Դավթյան

Բ. Դավթյան